15264

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 01 » 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0179-22

Ձեռնարկողը՝ ***«ՏԻ-ՍԼԱ» ՍՊԸ***

Սիսիան համայնք, Իսրայել Օրու փող., շ.2, բն. 3

Գործունեությունը՝ ***Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***

ՀՀ, Սյունիքի մարզ.

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0179-22

<01> 12 2022թ.

Սյունիքի մարզի Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Տի-Սլա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Անգեղակոթ բնակավայր

Ներածական մաս. Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան խոշորացված համայնքի Անգեղակոթ բնակավայրի վարչական տարածքում, համանուն գյուղից 3.7կմ դեպի հյուսիս-հյուսիս արևելք, Սպանդարյան գյուղից 4.2կմ դեպի հարավ-արևելք, Շաքիից 6.4կմ հյուսիս-արևմուտք: Հանքավայրը Սիսիան քաղաքի հետ կապված է 12-13կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով:

Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրի տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության և այլ գործառնական նշանակության հողերով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

Նկարագրական մաս. Սյունիքի մարզի Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրի տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Անդեզիտաբազալտներն իրենց որակական հատկանիշներով լիովին համապատասխանում են “Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий” 9479-2011 ГОСТ-ի «միջին ամրության ապարներին» ներկայացվող տեխնիկական պահանջներին և կարող են օգտագործվել ճարտարապետաշինարարական կառույցներում և երեսպատման իրերի ու նյութերի արտադրության համար:

Անդեզիտաբազալտներից (թարմ և ճեղքավորված) ստացված խիճը և ավազը համապատասխանաբար բավարարում են ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» և ՀՍՏ ԳՈՍՏ 8736-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջներին և կարող են օգտագործվել որպես լցանյութ ծանր բետոնի, ճանապարհային և այլ տեսակի շինարարական աշխատանքների համար:

Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրը, համաձայն «Շինարարական և երեսապատման քարի հանքավայրերի նկատմամբ պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» դասվում է 1-ին խմբին:

Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրի պաշարները B կարգով 285.3հազ.մ^3 քանակով, բլոկների 35.49% միջին ելքով հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 05.11.2021թ. N2066-Ա հրամանով:

Սույն նախագծով նախատեսվում է հանքարդյունահանման աշխատանքները կատարել մեխանիկական եղանակով:

-Բացահանքի առավելագույն երկարությունը 390մ է,

- լայնությունը 150մ,

-մշակման խորությունը կազմում է 19մ,

-օտարման մակերեսը 3.068հա է,

-օգտակար հանածոների հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է 285 300մ^3,

- օգտակար հանածոների արդյունաբերական (կորզվող) պաշարների քանակը 246 900մ^3,

-մակաբացման ապարների քանակը 62215մ^3 , այդ թվում՝ փուխր առաջացումներ 13195մ^3 , փուշտա 41970 մ^3, հիմնատակող խարամային ապարներ 7050մ^3:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ տեխնիկական առաջադրանքի ընդունված է 12500մ^3/տարի անդեզիտաբազալտների զանգված: Հանքարդյունահանման աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել շուրջ տարի, 5 օրյա աշխատանքային շաբաթով: Աշխատանքների օրերի քանակը տարում ընդունված է 260 օր, հերթափոխերի քանակը օրում -1, հերթափոխի տևողությունը – 8 ժամ: Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

Նախատեսվում է արտադրական հրապարակի կառուցում 350մ^3:

Լեռնակապիտալ աշխատանքների տևողությունը կազմում է 0.3տարի է:

Մակաբացման աշխատանքներից նախ փուխր առաջացումները T-130 բուլդոզերով մշակվում և տեղափոխվում են 15-20մ հեռավորության վրա ու կուտակվում: Այնուհետև Hyundai R320 LC9 էքսկավատորով բարձվում են КрАЗ-256Б ավտոինքնաթափի մեջ ու տեղափոխվում լցակույտ: Փուշտան հիդրավլիկական մուրճով նախնական մշակվելուց հետո նույն լեռնատրանսպորտային սարքավորումներով բարձվում և տեղափոխվում է մինչև 7կմ հեռավորության վրա գտնվող մշակման արտադրամաս:

Բացահանքի լցակույտ առաջացող ապարները 20245մ^3 ընդհանուր ծավալով ներկայացված են փուխր առաջացումներով – 13195մ^3 և օգտակար հաստաշերտը հիմնատակող խարամային ապարներով-7050մ^3 ծավալներով:

Հայցվող տեղամասի կոորդինատներն են ըստ Arm WGS-84 համակարգի .

1. Y=8581138.4000 X=4386130.1000
2. Y= 8581208.6000 X=4386050.1000
3. Y=8581245.5000 X=4386024.3000
4. Y=8581239.4000 X=4385969.1000
5. Y=8581397.1340 X=4385922.5986
6. Y=8581375.8045 X=4385813.0144
7. Y=8581341.2948 X=4385753.8876
8. Y=8581203.8642 X=4385908.5537
9. Y=8581177.3744 X=4386042.4102
10. Y=8581187.3070 X=4386043.9302
11. Y=8581112.3973 X=4386127.2755

Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ նախագծային կորուստները որոշվել են ըստ դրանց առաջացման աղբյուրների՝

1. Ըստ լեռնատեխնիկական պայմանների (կապված են օգտակար հանածոյի եզրագծման բարդության աստիճանից): Այդ ընդհանուր կորուստները կազմում են 38400մ³ կամ 13,46%: Դրանք հիմնականում մնում են բացահանքի կողերի պահպանիչ բնամասերում:
2. Շահագործողական կորուստներ: Տվյալ դեպքում նրանք կանխորոշվում են արդյունահանման տեխնոլոգիայից: Այդ կորուստները կազմում են 0,5% և հաշվի են առնված բլոկների ելքի որոշման ժամանակ:

Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած թափոնները 31,02մ³ /հերթ ծավալով Т-130 բուլդոզերով տեղափոխվում են միչև 15-20մ, կուտակվում աշխատանքային հրապարակում, այնուհետև 2.1մ³ շերեփի տարողությամբ Hyundai R320LC9 մակնիշի էքսկավատորով բարձվում են 12տ բեռնատարողությամբ КАМАЗ-5511/կամ նրան համարժեք КрАЗ-256Б/ մակնիշի ավտոինքնաթափերը ու տեղափոխվում մինչև 7կմ հեռավորության վրա գտնվող մշակման արտադրամաս:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, աշխատանքային հրապարակները, հանքախորշերը և մուտքային ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Տեխնիկական ջրամատակարարումն իրականացվում է КрАЗ-256Б մակնիշի ավտոմեքենայի վրա հարմարեցված ցիստեռնով:

Խմելու ջրի մատակարարումը կկատարվի ջրի կցիչ ցիստեռնով:

Ըստ հաշվետվության եղած տեղեկատվության, հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված, բուսատեսակներ և կենդանատեսակներ չկան:

Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

Տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են հորատիպ զուգարանում, որը նախատեսվում է պարբերաբար դատարկել տարածաշրջանում գործող և նմանատիպ ծառայություններ մատուցող ընկերությունների ուժերով՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման աշխատանքների արդյունքում առաջանալու են խախտված տարածքներ՝ բացահանքի հատակը 2.6հա մակերեսով և արտադրական հրապարակը 0.02հա մակերեսով, ընդամենը 2.62հա:

Արդյունքում, մոտ 3հա տարածքում հեռացվելու է հողաբուսական շերտը:

Ներքին լցակույտում նախ փռվում ու հարթեցվում են խարամային ապարները, ապա դրանց վրա փուխր առաջացումները ռեկուլտիվացվում: Ժամանակավոր արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 2535մ^2, միջին բարձրությունը 3.54մ: Շահագործման ավարտից հետո լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի են ենթարկվում բացահանքի հատակը 2.6հա մակերեսով և արտադրական հրապարակը 0.02հա մակերեսով, ընդամենը 2.62հա:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերի իրականացման համար անհրաժեշտ գումարը կկազմի 809.43 հազ.դրամ:

Տարեկան կտրվածքով մշտադիտարկումների իրականացման համար հատկացվելու է մոտ 615.0հազ.դրամ:

Հանքավայրի շահագործման հետևանքով ընդհանուր տնտեսական վնասը կկազմի՝ 6141.49հազ.դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Մեքենաների լիցքավորումը կիրականացվի մոտակա լիցքավորման կետերում:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է Անգեղակոթ բնակավայրից՝ պայմանագրային հիմունքներով:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով:
- Լեռնակապիտալ աշխատանքների ժամանակ հողաբուսական շերտի հանում և առանձին կուտակում արտաքին լցակույտում, հետագա ռեկուլտիվացիոն աշխատաքնների ժամանակ օգտագործելու նպատակով:

Հանքի խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրի շահագործման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
- Արտադրական հրապարակի տարածքի մշտադիտարկում՝ նավթամթերքներով աղտոտվածության ուսումնասիրության նպատակով, տարեկան մեկ անգամ:
- Լցակույտում պահեստավորված հողաբուսական շերտում հումուսի պարունակություն տարեկան մեկ անգամ:

-Հանքի հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում տարեկան մեկ անգամ:
-Աղմուկի մակարդակի վերահսկողություն տարեկան մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյունիքի մարզի Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրում արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Սյունիքի մարզի Սիսիան խոշորացված համայնքի Անգեղակոթ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Տի-Սլա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Սյունիքի մարզի Անգեղի անդեզիտաբազալտների հանքավայրում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան